

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

26.09.2013թ.
Նախագահ՝

Կ.Բ. Այվազյան

ք. Իջևան

Քարտուղար՝

Ա.Ս.Հակոբյան

Ներկա էին խորհուրդի նախագահ Կ.Բ. Այվազյանը (նիստի նախագահողը), խորհրդի քարտուղար Ա. Հակոբյանը, <<Գծանկար, գունանկար>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը, ասիստենտներ Ս.Հովհաննիսյանը, դասախոս Ա. Խաչատրյանը, <<Ղեկորատիվ – կիրառական արվեստի>> ամբիոնի վարիչ Ռ. Բուդդարյանը, Գեղ.խորհրդի նախագահ Լ.Ե.Լաչիկյանը, ասիստենտներ Գ.Զավրուշյանը, Ա.Զիրուխյանը, Դ.Զիրուխյանը, Ռ.Պողոսյանը, դասախոսներ Դ.Պողոսյանը և Ա.Դիլբարյանը:

Նիստին հրավիրված էր մասնաճյուղի, կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ, դասախոս Վ. Աղաբաբյանը :

ՕՐԱԿԱՐԳ

1.2013-14 ուստարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական աշխատանքների թեմաների հաստատում:

/զեկ.Լ.Ե.Լաչիկյան/

2.Ավարտական աշխատանքների փուլային նախապաշտպանությունների ժամանակացույցի հաստատում:

/զեկուցողներ՝ Ա.Հ.Միրզոյան, Ռ.Գ.Բուդդարյան/

ԼՍԵՅԻՆ – Տեղեկատվություն օրակարգի առաջին հարցի կապակցությամբ: Զեկուցողը տեղեկացրեց, որ ավարտական կուրսի ուսանողներին հատկացվել է 2013թ. շրջանավարտներին տրամադրված << Արվեստի պատմություն>> առարկայի պետական քննության հարցաշար/ 06.10.2012թ.<<Տուրիզմի կառավարման և մշակութաբանության>> ամբիոնի նիստի թիվ 3 արձանագր.:/ Նշվեց, որ այդ հարցաշարը բավականին բարեփոխվել է: Մասնաճյուղի տնօրենը նախկին հարցաշարը հաջողված չէր համարում: Նա հատկապես դժգոհ էր հնագույն շրջանից որոշակի հարցերի առկայության առումով / Հին Եգիպտոսի, Վաղ Բյուզանդական ճարտարապետական արվեստների հետ կապված/: Տնօրենը առաջարկել է հարցաշարում

մեծացնել « Հայ արվեստի պատմությանը» հատկացված չափաբաժինը: Նա տեղեկացրեց, որ մասնաճյուղի տնօրենի հանձնարարությամբ ստեղծվել է հարցաշարը վերանայելու և բարեփոխելու հանձնաժողով: Այդ հանձնաժողովը բավականին փոփոխություն է կատարել: Արդյունքում հարցաշարում տեղ են գտել 69 հարց, որոնք տրոհվել են այսպիսի համադրությամբ.

- Արտասահմանյան արվեստի պատմություն- 25 հարց
- Ռուսական արվեստի պատմություն- 7 հարց
- Հայկական արվեստի պատմություն- 37 հարց

Հարցաշարի հայկական արվեստի բաժնեմասում ներգրվել են հայ արդի քանդակագործություն, սփյուռքահայ նկարիչների , Տավուշի մարզի գեղանկարիչների մասին հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահն առաջարկեց, 2013-14 ուստարվա շրջանավարտների հետ Լ.Ե. Լաչիկյանը ճշտի, արդյո՞ք հարցաշարի բոլոր հարցերը լուսաբանված են, եթե կան հարցեր, որոնք բաց են: Նախապես կազմվեն ժամանակացույցեր՝ կոնկրետ թեմաներով և տվյալ շրջանի արվեստի պատմություն դասավանդած դասախոսների ազգանուններով՝ որպեսզի պետական քննությունից առաջ մնացած չլինեն չլուսաբանված հարցեր: Անթույլատրելի է քննական տոմսի մեջ ընդգրկված հարցը փոխարինել ուրիշ հարցով՝ անցած չլինելու պատճառով: Արդեն երկրորդ տարին է, որ պետական ամփոփիչ քննության գործընթացը ձայնագրվում է:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել գեղ.խորհրդի նախագահ Լ.Ե.Լաչիկյանին և ամբիոնի գործավար Գ.Ս.Ապլանյանին մեկ ամսյա ժամկետում/ մինչև 26.10.2013/ հարցաշարի հետ կապված կատարել վերջնական ճշտումներ ուսանողների հետ և արվեստի պատմություն դասավանդած դասախոսների հետ: Անհրաժեշտության դեպքում խորհրդին ներկայացնել լրացական ակնարկային թեմատիկ դասախոսությունների ժամանակացույց:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնների վարիչների տեղեկատվությունները ավարտական աշխատանքների փուլային նախապաշտպանությունների ժամանակացույց հաստատելու հարցի կապակցությամբ: Տեղեկացվեց, որ առկա է նախորդ կիսամյակի վերջում, ըստ ուսանողների նախասիրության,

ՂԵԿԱՎԱՐ	ՈՒՍԱՆՈՂ	ԹԵՄԱ
---------	---------	------

ձևաչափով բաշխումը:

«Գծանկար,գունանկարի» ամբիոն

1. Միրզոյան Ա.Հ. 5 ուսանող

2. Ջավրուշյան Գ.Հ. 5 ուսանող
3. Ստեփանյան Մ.Օ. 1 ուսանող
4. Հովհաննիսյան Ս.Թ. 3 ուսանող

<< Դեկորատիվ-կիրառական արվեստի >> ամբիոն

1. Դիլբարյան Ա.Ս. 2 ուսանող
2. Չիրուխյան Դ.Լ. 5 ուսանող
3. Չիրուխյան Ա.Լ. 5 ուսանող
4. Պողոսյան Ռ.Կ. 3 ուսանող
5. Պողոսյան Դ.Ա. 1 ուսանող

Ամբիոնների վարիչներն առաջարկեցին երկուշաբաթյա պարբերությամբ, գեղ.խորհրդի նախագահ Լ.Լաչիկյանի ֆակուլտետ հաճախելու եռօրյաներում, կազմակերպել փուլային նախապաշտպանություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ– Ֆակուլտետի խորհրդի նախագահն առաջարկեց նախապաշտպանությունների ժամանակ լսենք ուսանողներին, որպեսզի նրանք սովորեն իրենց աշխատանքները ներկայացնել: Դեկավար դասախոսները դիպլոմնիկի խոսքը թող լրացնեն, ոչ թե նրա խոսելու ժամանակ, այլ նրա խոսքից հետո, որպեսզի ուսանողը սովորի ճիշտ ներկայացնել, սովորի ճիշտ մեկնաբանել:

Մասնաճյուղի տնօրենը միշտ ընդգծում է, որ մեր ֆակուլտետի ուսանողները չեն կարողանում իրենց հրաշալի աշխատանքները գոնե լավ ներկայացնել:

Հարկավոր է, որ մեր դասախոսները ավարտական կուրսի ուսանողներին սովորեցնեն ոչ միայն լավ աշխատանքներ ստեղծագործել, այլ նաև լավ մեկնաբանել և տպավորիչ, գրագետ ներկայացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոնների վարիչներին և գործավարին, որ ավարտական աշխատանքների կատարողների վերահսկողության ժամանակացույցերին /ամսվա մեջ երկու հանդիպում, սևեռված օրով, ժամով, արվեստանոցով/դարձնել պատշաճ ուշադրություն:

Հանձնարարել գործավար Գ.Ս.Ասլանյանն իրականացնի շարունակական վերահսկողություն: Կոնսուլտացիայի իրականացման համար ստորագրի և՛ դասախոսը, և՛ ուսանողը, որպեսզի կիսամյակի վերջում հստակ երևա և՛ կատարած աշխատանքը, և՛ բաց թողումը: